

Ի քսանմէկերորդ օրն Բաջար պարզ ամսոյ , ի թուին Արաբաց  
Խոթհարիւր ութսունչորս տարւոյն(1) :

Պատասխան Բարկուկ ակիրայի  
առ քազաւորն Կասիյայի Յովհաննէս Ա.(2)

Քովեալն Աստուած երկարէ՛ կեանքը մեծ՝ յարգելի՛ ազնուատո՛մ՝  
արի՛ բարձր՝ անկեղծ՝ փառաբանեալ՝ փառաց ասպետ՝ քաջ առիւծ՝ հզօր  
Յովհաննէսի , գիտնականն իր մարդոց մէջ , արդարադասն իր ժողո-  
վըրդոց մէջ , պատին Քրիստոսի օրինաց , պսակն քրիստոնէութեան ,  
պաշտպանն խաչապաշտից(?), բարեկամն թագաւորաց եւ կայսերաց .  
թող իր վիճակը գովուի , առողջութիւնը պահպանուի , եւ հաճոյքը  
նորոգուի : Այս գրութիւնն հասնի անոր՝ որ իր ընդգրկած կրօնին կը  
հետեւի եւ կը վախճայ վերջին դատաստանի օրւան մօտենալէն :

Պատշաճ է յայտնել իր իմաստութեան , թէ իր նամակներն հասան  
մեզ ձեռամբ իր հաւատարիմ պատուիրակներուն (զորս Աստուած՝ բարձ-  
րացնէ) : Այդ նամակներուն մէջ թագաւորը՝ Հայաստանի նախկին իշ-  
խանին , թագունիին ու իրենց զաւակներուն կողմէ կը յայտնէր , թէ  
Հայաստանի իշխանին ազատութիւնը կը ցանկայ , որ պիտի ողջունուի  
չնորհակալութեամբ . կը խնդրէր նաեւ բարձրատիճան եւ հաւատա-  
րիմ անձնաւորութիւններէն , որպէս զի Հայաստանի յիշեալ իշխանին ,  
թագունիին ու իրենց զաւակներուն ազատութիւնը շնորհուի իրեն .  
նոյնպէս եւ կուզէր որ իր պատուիրակներուն՝ այն անձնաւորութեանց  
— որոնց պատին Աստուած աւելցնէ — ներկայանալն իմաց տրուի  
իրեն իր ղեսպանին միջոցով . եւ վերջապէս իր խնդրած շնորհին յաջո-

(1) Կասիյայի քազաւորներու ժամանակագրութիւնը հրատարակելով  
այս նամակը՝ ժանօրութեան մը մէջ կաւելցնէ , թէ արաբական բուսկանը կը  
նամտպատասխանէ Քրիստոսի 29 սեպտ. 1382 թուին :

(2) Սպաներէն բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document X: Վերը յիշուած  
ժամանակագրութիւնը (հս. Բ, եր. 171) կըսէ , թէ այս նամակը դրկուած է  
սուլսանին Ամիրայի անուամբ մեկ մտերիմէն . իսկ ժանօրութեան մէջ ալ կա-  
ւելցնէ , թէ այս անունը սպագրութիւններու մէջ եղած է Ալմիրայի , զոր կը  
սրբագրէ՝ Ամիր Ալի: Ըստ իս՝ ասոնց բոլորն ալ սխալ են , եւ պէտք է կար լայ՝  
Almirayl, որ մեր մէջ կը նշանակէ պարզապէս Ամիրայ , ինչպէս բարգմանած  
եմ ասկէ առաջ ուրիշ տեղ . (տե՛ս գրքիս եր. 68) :